ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ
ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA
«SERVICE FOR THE PROTECTION OF HISTORICAL ENVIRONMENT AND CULTURAL MUSEUM RESERVATIONS»
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
"СЛУЖБА ПО ОХРАНЕ ИСТОРИЧЕСКОЙ СРЕДЫ И ИСТОРИКО-КУЛЬТУРНЫХ МУЗЕЕВ-ЗАПОВЕДНИКОВ"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ

«03» հունիսի, 2021թ. N 1-398

«ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ -ի
Տնօրեն Է. Վարդանյանին

Հարգելի պարոն Վարդանյան,

Տեղեկացվում է, որ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի /այսուհետ՝ ՊՈԱԿ/ և «ԷԼԱ ՇԻՆ» ՍՊԸ-ի /այսուհետ՝ կազմակերպություն/ միջև 2021 թվականի փետրվարի 01-ին կնքված N ՊՄԱԹ-ԳՀԱՊՁԲ-21/1-1 ծածկագրով պայմանագրի /այսուհետ՝ պայմանագիր/ 1.1 կետի համաձայն կազմակերպությունը պարտավորվել է ՊՈԱԿ-ին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ցուցանակներ /այսուհետ՝ ապրանքներ/: Պայմանագրի N 1 հավելվածի համաձայն ապրանքների մատակարարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրը: Պայմանագիրն ուժի մեջ է մտել 2021 թվականի մարտի 30-ին:

Պայմանագրի 2.1.1 կետի համաձայն, Գնորդն իրավունք ունի ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի: Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն, Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն, Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝ ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Համաձայն ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ Ա. Հովհաննիսյանի զեկուցագրի թվով շտկման կարիք ունի թվով 38 ցուցանակների պարսկերեն լեզվի և բրալյան համակարգով ներկայացված տեքստերը: 2021 թվականի հունիսի 02-ի դրությամբ Ձեր կողմից շտկվել է թվով 8 ցուցանակ, իսկ թվով 30-ը դեռևս շտկված չէ:

Հաշվի առնելով, որ կազմակերպությունը վերը նշված ցուցանակները պայմանագրով թույլատրելի ժամկետում չի շտկել և հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7.1 կետի բ) ենթակետը և 8.9 կետը ծանուցում եմ, որ ՊՈԱԿ-ը 2021 թվականի հունիսի 04-ից միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՏՆՕՐԵՆ ԱՐԱ ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Կատ.՝ Ա. Հովհաննիսյան